ՖՐԻԿ ԽԱՏԱՄԻ-ՏԻՐԳՈՐԴԻ

ԽՈՐՀՐԴԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՄՆ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1979-89 ԹԹ.

Իրանում իսլամական հեղափոխության հաղթանակն էականորեն փոխեց Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող ուժերի դասավորվածությունը և տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը:Խոմեյնու հռչակած «ոչ Արևելք,ոչ Արևմուտք,այլ իսլամ» տեսությունը նախատեսում էր բացառել Իրանի դաշնակցային հարաբերությունները ցանկացած գերտերության հետ: Խոմեյնու արտաքին քաղաքական հիմնադրույթները և դրանք կյանքի կոչելու երկրի նոր իշխանությունների պատրաստակամությունը լուրջ անհանգստություն առաջացրին Կրեմլում և Սպիտակ Տանը, քանզի երկու տերություններն էլ էական շահեր ունեին Մերձավոր Արևելքում: Իսլամական արմատականությունն իր գաղափարական էությամբ սպառնում էր դրանց: Միաժամանակ երկու գերտերություններն էլ, խորապես գիտակցելով Խոմեյնու արտաքին քաղաքական գաղափարների էությունը,ձգտում էին Իրանին տրամադրել միմյանց դեմ:Այս տարիների ընթացքում խորհրդա-իրանական հարաբերությունների և դրանցում ԱՄՆ-ի դիրքորոշման վերլուծությունը ցույց է տալիս, որ հարաբերությունների ցանկացած բարելավում Իրանի և ԽՍՀՄ-ի միջև, խիստ բացասաբար էր ընդունվում ԱՄՆ-ում:Վերջինս իր տնտեսական և ռազմա-քաղաքական լծակների միջոցով փորձում էր Իրանին հետ պահել ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավումից:Իր հերթին ԽՍՀՄ-ը փորձում էր հնարավորինս արդյունավետ օգտվել Իրանի հակաամերիկյան կեցվածքից: 1980-ական թթ. իրանա-ամերիկյան ցանկացած գաղտնի շփում բացասաբար էր ընկալվում նրա կողմից:«Ոչ Արևելք,ոչ Արևմուտք,այլ իսլամ» հայեցակարգը հնարավորություն էր տալիս Իրանին վարպետորեն խուսանավել ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև՝ նրանցից հնարավորին չափ մեծ օգուտներ քաղելու համար:

Բազարգանի կառավարման ժամանակ խորհրդա-իրանական հարաբերությունները արմատական փոփոխություններ չկրեցին: Նրա կառավարության արտաքին քաղաքական առաջին քայլերն ավելին քան հուսադրող էին ԽՍՀՄ-ի համար և աշխարհաքաղաքական լուրջ միավորներ տվեցին նրան Մերձավոր Արևելքում:Դրանք, ըստ իրանագետ Շ. Հանքերի, հետևյալն էին՝ Իրանի դուրս գալը ՍԵՆՏՕ-ի դաշինքից, պաշտոնական հարաբերությունների խզումն Իսրայելի և Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հետ և հարաբերությունների ներտացումը ԽՍՀՄ-ի դաշնակիցների՝Սիրիայի, Լիբիայի և Պաղեստինի Ազա-

տագրման Կազմակերպության հետ[1]: Այս տեղաշարժերի մեջ ԽՍՀՄ-ի համար ամենակարևորը արաբա-իսրայելական հակամարտության հանդեպ Իրանի քաղաքականության արմատական փոփոխություններն էին,որոնք անշուշտ բխում էին ԽՍՀՄ-ի և նրա տարածաշրջանային դաշնակիցների շահերից: Իրանի կողմից հարաբերությունների սերտացումը Սիրիայի,Լիբիայի և ՊԱԿ-ի հետ ԽՍՀՄ ղեկավարները դիտում էին որպես տարածաշրջանում իրենց օգտին աշխարհաքաղաքական միավորների ավելացում: Սակայն հեղափոխության հաղթանակից քիչ անց Իրանն այս հարցում պետք է հիասթափեցներ Մոսկվային: 1979 թ. վերջին սրելով իր հարաբերությունները Յասիր Արաֆաթի հետ՝ Իրանը որոշ չափով հասկացնում էր ԽՍՀՄ-ին,որ ինքը հանդես չի գալու որպես Կրեմլի խաղաքարտ,այլ առաջ է տանելու սեփական խաղի կանոնները:

Մեկ այլ հեղինակ՝ Մ. Վարասթեն, Իրանում ԽՍՀՄ-ի ձեռք բերած առավելությունների թվին է դասում նաև այն, որ ԱՄՆ կորցրեց Իրանին որպես «Պարսից ծոցի ժանդարմ», և խորհրդա-իրանական սահմանից դուրս բերվեցին ԱՄՆ-ի կողմից տեղակայված էլեկտրոնային հետախուզական սարքերը[2]:

Այս ամենի հետ մեկտեղ ի հայտ եկան որոշակի գործոններ,որոնք հակամարտության աղբյուր էին հանդիսանում խորհրդա-իրանական հարաբերություններում:Դրանից փորձում էր օգուտներ քաղել ԱՄՆ-ը հենց Բազարգանի կառավարման օրոք:Այդ գործոնների թվին կարելի է դասել Իրանի ընդգծված հակակոմունիզմը և իսլամական հեղափոխության «արտահանման» տեսությունը:Սա,ըստ ԽՍՀՄ ղեկավարության, լուրջ սպառնալիք էր երկրի ազգային անվտանգությանը:ԽՍՀՄ-ի հարավային սահմաններում ապրում էր մահմեդական հոծ բնակչություն, որի վրա կարող էին ներգործություն ունենալ Խոմեյնու գաղափարները: Հատկապես անհանգստության առարկա էր Խորհրդային Ադրբեջանը, որի մահմեդական հավատացյալները շահեր էին: Այստեղ Խոմեյնու կարգախոսները կարող էին ավելի մեծ ընդունելության արժանանալ,քան մյուս մահմեդական միութենական հանրապետություններում: Իրանի և ԽՍՀՄ-ի միջև հակամարտության աղբյուր էր հանդիսանում նաև 1921թ. խորհրդա-իրանական պայմանագիրը, որի հինգերորդ և վեցերորդ կետերը թույլ էին տալիս ԽՍՀՄ-ին ռազմական միջամտության դիմել Իրանի հանդեպ:

Երկու երկրների միջև լարվածությանը նպաստում էին նաև Իրանի ղեկավարության կասկածներն առ այն, որ Մոսկվան, ինչպես 1945-46 թթ., այնպես էլ 1979 թ. հրահրում է անջատողական շարժումներ իրանաբնակ ազգերիների, քրդերի շրջաններում: Այս առումով ուշագրավ է Իրանի քուրդ անջատողականների առաջնորդ Ա. Ղասեմլուի հայտարարությունը,որտեղ նա ողջունում էր ԽՍՀՄ-ի աջակցությունը քրդական կողմի ինքնավարության պահանջներին[3]: Նա նաև նշում էր, որ իր ղեկավարած շարժումը «ցանկացած տեսակի» օգնություն է ստանում,ներառյալ ռազմական,Իրանին սահմանակից երկրներից

ԽՍՀՄ-ից, Իրաքից, Թուրքիայից[4]: Իրանի և ԽՍՀՄ-ի միջև հարաբերություններին լարվածություն էր հաղորդում նաև ԽՍՀՄ-ի աճող միջամտությունն Աֆղանստանի ներքին գործերին:

ԱՄՆ Ջ. Քարթերի, այնուհետև Ռ. Ռեյգանի նախագահության օրոք փորձում էր իր քաղաքականությունը կառուցել հենց այս հակասությունների վրա: ԱՄՆ փորձում էր իսլամական արմատականությունը հարավից ուղղել դեպի հյուսիս՝ ԽՍՀՄ-ի դեմ: Սա մի կողմից կապահովեր ամերիկյան շահերի անվտանգությունը տարածաշրջանում,մյուս կողմից պայմաններ կստեղծեր ԽՍՀՄ-ի ներսում իրավիճակի ապակայունացման համար: ԱՄՆ նաև դեմ էր 1921 թ. պայմանագրի ուժի մեջ մնալուն:Դրա չեղյալ հայտարարումն ավելի ապահով կդարձներ Պարսից ծոցի և Արաբական ծովի անվտանգությունն այդ շրջանների նկատմամբ ԽՍՀՄ-ի հնարավոր ոտնձգությունից:Նշենք,որ 1979 թ. նոյեմբերի 3-ին Իրանի կառավարությունը չեղյալ հայտարարեց 1921 թ խորհրդա-իրանական պայմանագրի 5-րդ և 6-րդ կետերը[5]:

Այս ամենով հանդերձ, ԽՍՀՄ ղեկավարությունն Իրանում ձևավորված նոր վարչակարգը համարում էր իր շահերի հնարավոր գործիք: ԽՄԿԿ Քաղբյուրոյի փաստաթղթերից մեկում նշվում էր. «Ակտիվորեն ընդդիմանալ Վաշինգտոնի այն քաղաքականությանը, որը միտված է միացյալ ճակատ կազմելու Արևմուտքի և որոշ իսլամական երկրների հետ և վերակողմնորոշելու իսլամական մոլեռանդությունը՝ նրան տալով հակախորհրդային ուղղվածություն»[6]: Փաստորեն ԽՍՀՄ-ը ամեն կերպ փորձում էր իր սահմաններից հեռու պահել իսլամական արմատականության տարածումը:Իրանում ԽՍՀՄ ազդեցության տարածմանը նպաստում էր նաև «ԹՈՒԴԵ» կուսակցության վերադարձն Իրանի քաղաքական ասպարեզ:

Խորհրդա-իրանական հարաբերություններում նոր փուլ սկսվեց ԱՄՆ-ի դեսպանատան գրավումից և Բազարգանի կառավարության անկումից հետո: Իրանա-ամերիկյան ճգնաժամը (1979-81 թթ.) նոր հնարավորություններ տվեց ԽՍՀՄ-ին ընդլայնելու իր մերձավորարևելյան էքսպանսիան: Դեսպանատան գրավումը միանգամայն համապատասխանում էր ԽՍՀՄ-ի տարածաշրջանային շահերին: Ըստ այդ երկրի ղեկավարության,իրանա-ամերիկյան ցանկացած ճգնաժամ Իրանին կմղեր սերտացնելու հարաբերությունները խորհրդային ճամբարի երկրների հետ: ԽՍՀՄ ղեկավարությունը շահագրգռված էլ չէր պատանդներին շուտափույթ ազատելու հարցում՝ հիմք ընդունելով վերոհիշյալ հաշվարկները: Դեսպանատան գրավումից անմիջապես հետո Խորհրդային Միության զանգվածային լրատվամիջոցներն իրանամետ քարոզչություն սկսեցին ծավալել:Նրանք ավելի շատ դատապարտում էին ամերիկյան իմպերիալիզմն Իրանում,քան դիվանագիտական անձեռնմխելիության սկզբունքի ոտնահարման փաստը[7]:

1979թ. դեկտեմբերի 27-ին խորհրդային բանակի ներխուժումն Աֆղանստան նոր լարվածություն հաղորդեց խորհրդա-իրանական հարաբերություններին: ԽՍՀՄ-ի Աֆղանստան ներխուժելու հիմնական պատճառները հետևյալն էին.

1) 1979 թ. սեպտեմբերին Աֆղանստանում տեղի ունեցած պետական հեղաշրջման արդյունքում Ն. Թարաքիին տապալած և իշխանության եկած Հ. Ամինն աստիճանաբար սկսել էր փոխել երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: Նա քայլեր էր ձեռնարկել մերձենալու Արևմուտքի հետ և բռնություններ էր ծավալել Աֆղանստանի կոմկուսի խորհրդամետ խմբավորման դեմ:Այս հեղաշրջումից հետո Աֆղանստանում ընթացող իրադարձությունների արդյունքում ԽՍՀՄ-ը կանգնել էր այդ երկրում իր դիրքերն ու ազդեցությունը կորցնելու վտանգի տակ: Ամինի վարչակարգը միտված էր շրջվելու ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմը:Իսկ ԽՍՀՄ-ը ստիպված էր դիմելու ռազմական միջամտության՝ իր դիրքերն այդ երկրում ամրապնդելու համար:

2) Ներխուժման մյուս պատճառը կապված էր Իրանում ընթացող իրադարձությունների և Աֆղանստանում թափ առնող իսլամական արմատականության հետ:Սա շատ ավելի վտանգավոր հետևանքներ կունենար ԽՍՀՄ-ի համար,քան Հ. Ամինի հակախորհրդային կեցվածքը: Այս իրավիճակին շատ ճիշտ գնահատական է տվել Ս. Վենսը:Ըստ նրա, Մոսկվան եկել էր այն եզրահանգման,որ Աֆղանստանի կոմունիստական վարչակաչգը չի կարող համարժեք պատասխան տալ իսլամական արմատականության սպառնալիքին:Կրեմլը երկյուղում էր,որ Աֆղանստանի ներկա վարչակարգին փոխարինելու կգար իսլամական արմատական կառավարություն: Սրա արդյունքում «Խոմեյնու տենդը» կտարածվեր ԽՍՀՄ հարավային սահմաններից ներս ապրող բնակչության շրջանում[8]:

ԽՍՀՄ ներխուժումն Աֆղանստան կարելի է որոշ չափով կապել դեսպանատան գրավման հետ: Իրանա-ամերիկյան ճգնաժամի խորացումը և միջազգային հանրության ուշադրության կենտրոնացումն Իրանի վրա, ԽՍՀՄ-ին հնարավորություն տվեցին օգտվել հարմար առիթից և լուծել որոշ աշխարհաքաղաքական խնդիրներ: Այս ճգնաժամը հնարավորություն էր տալիս ԽՍՀՄ-ին աշխարհաքաղաքական առավելության հասնել ԱՄՆ-ի հանդեպ և առիթ էր ծառայում արդարացնելու Մոսկվայի զավթողական նպատակները Աֆղանստանի և տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ: Կրեմլը լավ էր գիտակցում, որ ԱՄՆ անպատասխան չէր թողնի դեսպանատան գրավումը: Նա կամ ռազմական լայնամասշտաբ միջամտություն կսկսեր Իրանի դեմ, կամ քայքայիչ գործողությունների միջոցով կփորձեր տապալել կղերական վարչակարգը: Ուստի և ԽՍՀՄ-ին անհրաժեշտ էր նախահարձակ լինել տարածաշրջանում: Ըստ Փ. Սելինջերի, ռուսներն այն մտքին էին, որ ամերիկացիները ռազմական գործողություններ կսկսեն Իրանի դեմ:Եթե դա ի կատար ածվեր,

ապա ԽՍՀՄ-ի Աֆղանստան ներխուժումը պետք է հակակշռեր հետագայում ԱՄՆ-ի՝ Իրան ներխուժմանը[6]: Դիմելով դեսպանատան գրավման քայլին՝ Իրանի բարձրաստիճան հոգևորականությունը վստահ էր,որ Խորհրդային Միությունը այս հարցում կպաշտպանի իրենց: Նրանք գտնում էին, որ եթե ԱՄՆ պատերազմ սկսեր Իրանի դեմ,ապա ԽՍՀՄ-ը կմիջամտեր իրենց օգտին: ԽՍՀՄ-ը պատրաստվում էր կանխելու ԱՄՆ-ի հնարավոր պատերազմն Իրանի դեմ:Նա մեծ ռազմական ուժեր էր կենտրոնացրել խորհրդա-իրանական սահմանին:Ըստ Ն. Հովհաննիսյանի,Խորհրդային Միությունը Իրանի համար այդ ծանր օրերին, հավատարիմ իր տված խոստմանը, զգալի թվով լրացուցիչ զորքեր, հատկապես զրահատանկային ուժեր էր կենտրոնացրել Իրանի սահմանի երկայնքով՝ Հայաստանի և Նախիջևանի հատվածներում:Նա պատրաստվում էր կանխելու ամերիկյան հնարավոր ներխուժումն Իրան[7]:

Բավական ուշագրավ է ԽՍՀՄ քաղաքականությունն Իրանի և Իրաքի հանդեպ 1980-88 թթ. պատերազմում:Նա, հայտարարելով իր չեզոքությունը, ԱՄՆ-ի նման որդեգրեց «ուժերի հավասարակշռման» քաղաքականությունը:Այս առումով ԽՍՀՄ-ը սկսեց զինել Իրանին և Իրաքին:Նրանցից որևէ մեկի հաղթանակը հիմնովին կփոխեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերն ի վնաս ԽՍՀՄ-ի: Հայտնի է,որ ԱՄՆ այդ պատերազմում փորձում էր երկու երկրներին էլ ներառել իր ազդեցության ոլորտի մեջ:Պատերազմի ողջ ընթացքում Իսրայելի և ԱՄՆ-ի ռազմական օգնությունն Իրանին դժգոհություն էր առաջացնում Կրեմլում:Սրանից ելնելով՝ Մոսկվան որոշեց գործել ԱՄՆ-ի նմանությամբ՝ փորձելով Իրանին և Իրաքին ներառել իր ազդեցության ոլորտ:Պատերազմի սկզբում ԽՍՀՄ-ը ոչ մեծ քանակով զենք և զինամթերք էր ուղարկում Իրաքին Արևելյան Եվրոպայի երկրների միջոցով[8]: Պատերազմի սկզբնական փուլում Իրաքը հաղթանակներ էր տանում և լուրջ սպառնալիք էր ներկայացնում Իրանի ամբողջականությանը: Ուստի այդ տարիներին նրա օգնությունն Իրաքին ավելի սահմանափակ էր, քան Իրանին: Ըստ որոշ տվյալների, 1981 թ. հուլիսին Մոսկվան և Թեհրանը կնքեցին գաղտնի պայմանագիր, որով ԽՍՀՄ-ը ռազմա-տեխնիկական օգնություն էր ցույց տալու Իրանին: Սա ենթադրում էր խորհրդային ռազմական խորհրդակցության առկայությունն Իրանի բանակում և իրանցի զինվորականների ուսուցումը ԽՍՀՄ-ում[9]: Նշենք,որ ԿՀՎ-ի տվյալներով 1981 թ. վերջերին ԽՍՀՄ-ը Իրանին է վաճառել մոտ 220 մլն.դոլ. արժողությամբ ցամաքային ուժերի համար նախատեսված զինտեխնիկա[10]: Արտերկրից Իրանի զենքի գնումների հետ կապված բավականին ուշագրավ է Իրանի նախագահ Ա. Խամենեու՝ «Նյուսուիք» թերթին տված հարցազրույցը:Այստեղ նա ի լուր աշխարհի անուղղակիորեն հասկացնում է,որ Իրանը զենք է գնում թե ԽՍՀՄ-ից և թե Արևմուտքից:Նա Իրանի այս քայլը այսպես է հիմնավորում և արդարացնում. «Զենքի և զինամթերքի գնումը չի նշանակում ռազմական օգնություն,որը հանդիսանում է

օտարերկրյա խորհրդականների օգտագործում, կամ ռազմական փորձագետների միջամտություն: Մենք երբեք սա չենք ընդունում,բայց գնում ենք զենք: Մենք այս հարցում դռները փակ չենք պահում»[11]: Խամենեին կոծկում է այն փաստը, որ իրանական բանակում և անվտանգության ուժերում աշխատում էին ԽՍՀՄ ռազմական խորհրդականները: 1982 թ. դրությամբ Իրանում էին գտնվում մոտ 2 հզ. խորհրդականներ ԽՍՀՄ-ից, որոնք ընդգրկված էին տնտեսական և տեխնիկական նախագծերում,իսկ նրանցից մի քանիսը նաև ռազմական օգնության ծրագրերում[12]:

1982 թ կեսերից սկսած Իրան-ԽՍՀՄ հարաբերություններում որոշակի տեղաշարժեր նկատվեցին բացասական իմաստով: Սա առաջին հերթին կապված էր 1982 թ.-ից ռազմաճակատում Իրանի հաջողությունների հետ: Այդ ժամանակ Սպիտակ Տունն ավելի արդյունավետ դարձրեց իր օգնությունն Իրաքին: Կարելի է ասել, որ գրեթե նույն մարտավարությունն ընտրեց Մոսկվան: Նա դեմ էր Իրանի հաղթանակին և Սադդամի վարչակարգի տապալմանը: Այս հիմքի վրա էլ երկու երկրների հարաբերությունները սկսեցին սառել: Մոսկվային անհանգստացնում էին Իրանի հաջողությունները ռազմաճակատում, քաղի այն փոխելու էր ուժերի հաշվեկշիռը տարածաշրջանում: ԿՀՎ-ի գաղտնի փաստաթղթերից մեկում ասվում է. «Եթե Թեհրանի առաջխաղացումը հաջողվի և դրա հետևանքով Բաղդադում ստեղծվի շիա արմատական վարչակարգ, ապա դա ԽՍՀՄ ղեկավարության կարծիքով կամրապնդի կրոնական իշխանության դիրքերը Թեհրանում: Այն Իրանին ավելի պակաս զգայուն կդարձնի խորհրդային ներխուժման հանդեպ: Իրանի աճող ինքնավստահությունն առ այն,որ Իրաքը չի կարող ջախջախել իրեն, կքաջալերի Խոմեյնու վարչակարգին:Նա ցույց կտա իր հզորությունը՝շրջվելով ԹՈՒԴԵ-ի դեմ և հավանաբար ընդլայնելով օգնությունը աֆղան ապստամբներին[13]»:ԿՀՎ-ի վերոհիշյալ կանխատեսումները որոշ չափով իրականություն դարձան:1983 թ մայիսին Իրանում արգելվեց «ԹՈՒԴԵ» կուսակցությունը: Կառավարությունը երկրից վտարեց տասնութ խորհրդային դիվանագետների լրտեսության մեղադրանքով[14] և սկսեց զանգվածային ձերբակալումները կոմունիստների շրջանում:Դեկտեմբերին «ԹՈՒԴԵ»-ի տաս անդամներ,որոնք մեղադրվում էին Իրանի զինված ուժեր ներթափանցելու և ԽՍՀՄ-ի օգտին լրտեսություն անելու մեջ,մահապատժի ենթարկվեցին[15]: Այս հարցում Իրանի հատուկ ծառայություններին օգնում էին նրանց բրիտանացի գործընկերները: Այդ ժամանակ Իրանից Մեծ Բրիտանիա էր փախուստի դիմել ԽՍՀՄ փոխդեսպանը: Նա Անգլիայի գաղտնի ծառայություններին էր փոխանցել նյութեր Թեհրանում ՊԱԿ-ի ակտիվության մասին[16]:

Չախակողմյան քաղաքական ուժերի նկատմամբ Խոմեյնու սկսած «խաչակրաց արշավանքը» լայն ընդունելություն գտավ ԱՄՆ-ում:Սպիտակ Տունը սկսեց խրախուսել և քաջալերել Իրանին:Ռ. Ռեյգանը ողջունեց սա և բռնու-

թյունները «ԹՈՒԴԵ»-ի հանդեպ որակեց «զգալի առաջընթաց իրանա-ամերիկյան հակասությունների կարգավորման մեջ»[17]:

1985թ.-ը շրջադարձային տարի եղավ ԽՍՀՄ-ի համար: Չեռնենկոյի մահից հետո, մարտին ԽՄԿԿ առաջին քարտուղար ընտրվեց Մ. Գորբաչովը: Նա սկսեց հիմնովին վերանայել երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը: Այս ծրագիրը հայտնի է «վերակառուցում» անվամբ: Բնականաբար, այս տեղաշարժերն իրենց ազդեցությունն էին թողնելու ԽՍՀՄ Մերձավորարևելյան քաղաքականության վրա և խորհրդա-իրանական հարաբերությունների վրա՝ մասնավորապես:Գորբաչովի՝ ԽՍՀՄ ղեկավար դառնալն ինչպես աշխարհի բոլոր մասերում,այնպես էլ Մերձավոր Արևելքի համատեքստում գոհացուցիչ էին ԱՄՆ-ի համար: Սպիտակ Տան գլխավոր խնդիրը ԽՍՀՄ-ից հստակ երաշխիքներ ստանալն էր, որ վերջինս նպատակադրված չէ տապալելու Խոմեյնու վարչակարգը և դուրս գալու Պարսից ծոց: Բայց այս ամենով հանդերձ, փորձելով պահպանել «ուժերի հավասարակշռությունը» ԽՍՀՄ-ը շարունակում էր ռազմական օգնությունն Իրանին և Իրաքին:1985 թ.-ի դրությամբ Իրանում աշխատում էին թվով 5 հզ. խորհրդականներ ԽՍՀՄ-ից: Իսկ 1986 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ն Իրան առաքեց 18,64 մլն. դոլ. արժողությամբ արդիական զենք[18]:

1986թ. «Իրանգեյթ»-ի սկանդալի բացահայտմամբ խորհրդա-իրանական հարաբերություններում նորից սառնություն գրանցվեց:Խորհրդային քարոզչամեքենան անմիջապես սկսեց հակաամերիկյան հիստերիան՝ բարձրաձայնելով, որ «Իրանգեյթ»-ի գործարքով ԱՄՆ նպատակ ուներ երկարաձգել պատերազմը և միջամտել Իրանի ներքին գործերին: Այս հարցում Մոսկվայի անհանգստությունն իրանա-ամերիկյան հաշտեցման միտումներն էին[19]: Սկանդալից հետո ԽՍՀՄ-ը, ռազմա-քաղաքական շրջադարձ կատարելով, միանշանակ բռնեց իրաքամետ կողմնորոշում: Պարզ դարձավ,որ Իրանը վստահելի գործընկեր չէ և երկակի խաղ է սկսել ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հետ:Այդ թվականից ԽՍՀՄ-ն էականորեն մեծացրեց ռազմական օգնությունն Իրաքին: 1986 թ. կեսերից մինչև 1988 թ. սկզբները Կրեմլը Սադդամի տրամադրության տակ դրեց 9,3 մլրդ. դոլ. արժողությամբ զենք ու զինամթերք՝ մոտ 2 հզ. տանկ, որոնցից 800-ը այն ժամանակ գերարդիական «T-72»,մոտ 330 «MIG-23»,«MIG-25»,«MIG-27» կործանիչներ,300 «երկիր-երկիր» դասի հրթիռներ, «Scud-B» և «SS-12» տեսակի հրթիռներ[20]: ԽՍՀՄ-ի քաղաքական գծի այսպիսի փոփոխությունը համապատասխանում էր նաև ԱՄՆ-ի շահերին: Վերջինս 1986 թ.-ից հետո ամեն ինչ անում էր, որպեսզի Իրանը բանակցությունների սեղանին նստի, քանզի կար պատերազմի միջազգայնացման վտանգ: Այն սպառնում էր նաև Մոսկվային: Դրա համար էլ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, կարծես միմյանց չխանգարելով, անվերապահ աջակցում էին Սադդամին: 1987թ. դրությամբ նրանց աշխարհաքաղաքական շահերից չէր բխում այս պատերազմի

շարունակումը: Օգտագործելով «Իրանգեյթ»-ի սկանդալը՝ Մոսկվան փորձեց բարձրացնել իր վարկն արաբական երկրների մոտ:

1988թ. օգոստոսի 20-ին երբ պատերազմն ավարտվեց, դա նոր հնարավորություններ ստեղծեց ԽՍՀՄ-ի համար ընդլայնել կապերն Իրանի և Իրաքի հետ: Մոսկվան նույնիսկ առաջարկեց ուղիղ շփումներ հաստատել Թեհրանի և Բաղդադի միջև: Բայց Իրանը դա մերժեց՝ հավանություն տալով ՄՍԿ-ի միջնորդությանը[21]: Պատերազմից հետո ավերված տնտեսությունը վերականգնելու համար Իրանն օտարերկրյա ներդրումների կարիքն ուներ: Երկրի ղեկավարությունը և նրանում հատկապես «իրատեսների» կամ «չափավորների» խմբավորումը, Ա. Հաշեմի-Ռաֆսանջանու գլխավորությամբ, ձգտում էր բարելավել հարաբերությունները խորհրդային և արևմտյան ճամբարների հետ:Այդ առաջնորդները փորձում էին Իրանը դուրս բերել մեկուսացումից և բարելավել հարաբերությունները «կապիտալ ունեցող երկրների» հետ: Այս հարցում ԽՍՀՄ-ը կարևոր դեր ուներ ոչ միայն որպես ներդրումների, այլ նաև արևմտյան ներդրումներին այլընտրանքային աղբյուր[22]: Այս հիմքի վրա էլ երկու երկրների տնտեսական հարաբերություններն ընդլայնվեցին: Խորհրդա-իրանական հարաբերություններում հերթական ջերմացումը գրանցվեց, երբ ԽՍՀՄ-ը 1988թ. փետրվարին հայտարարեց,որ դուրս է բերում զորքերն Աֆղանստանից[23]:

1989թ. հունիսին Խոմեյնու մահից հետո խորհրդա-իրանական հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին:Դրան նպաստեցին մի շարք գործոններ,որոնցից կարևորը Խոմեյնու մահից հետո իրականացված արտաքին ու ներքին քաղաքական փոփոխություններն էին Իրանում: Հատկանշական է Իրանի խորհրդարանի խոսնակ Ա. Հաշեմի-Ռաֆսանջանու այցը ԽՍՀՄ 1989թ. հունիսի վերջերին: Նա հանդիպեց ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության, այդ թվում և Մ. Գորբաչովի հետ: Երկու ղեկավարները կնքեցին մի շարք տնտեսական և ռազմական համագործակցության պայմանագրեր[24]:

Խորհրդա-իրանական հարաբերություններում տեղաշարժերի մյուս գործոնը «սառը պատերազմի» ավարտն էր:Այդ ժամանակ ԽՍՀՄ-ն Իրանը չէր դիտում որպես աշխարհաքաղաքական առավելություն իր համար,ինչպես 1980-ական թթ. առաջին կեսին էր:Իրանի կարևորությունը ԽՍՀՄ-ի համար, որպես հակաարևմտյան ուղղվածություն ունեցող երկրի, նվազեց: Սա հիմնականում գորբաչովյան «վերակառուցման» արդյունք էր:Մյուս կողմից 1988-89 թթ.-ից հետո Իրանի կարևորությունն ԱՄՆ-ի համար, որպես Մերձավոր Արևելքում կոմունիզմի տարածման առջև կանգնած պատնեշ, ևս նվազեց:Սրա հիմնական պատճառն էլի «սառը պատերազմի» ավարտն էր: Իրանի և Իրաքի համար «սառը պատերազմ»-ի ավարտը լուրջ դժվարություններ ծնեց:Նրանք այլևս չէին կարող խուսանավել խորհրդային և արևմտյան ճամբարների միջև, ինչպես դա լինում էր 1980-ական թթ.:

[1] Hunter Sh., Soviet-Iranian Relations in the Post-Revolution Period,-in: Iran's Revolution: The Search for Consensus, Bloomington,1990,pp. 86, (այսուհետ՝ Iran's Revolution...).

[2] Varasteh M.,The Soviet Union and Iran,1979-89,-in: Iran and the International Community, L.,1991,p.47.

[3] Նույն տեղում,էջ 48:

[4] Menashri D.,Iran. A Decade of War and Revolution,N.Y.,1990,p.200.

[5] Ramazani R., Iran's Foreign Policy: Contending Orientations,-in: Iran's Revolution..., p.52.

[6] Extract from Protocol No.181 of the CC CPSU Politiburo Session of 28 January 1980, About further Measures to Provide for the National Interests of the USSR in Relation to the Events in Afghanistan,- in:The Soviet Union and Afghanistan,1978-1989: Documents from the Russian and East German Archives, ինտերնետային կայքի հասցեն՝ www2.gwu.edu/~nsarchiv/CWIHP/ BULLETINS/b8-9a13.htm

[7] Rubinstein A.,The Soviet Union and Iran under Khomeini,-in: "International Affairs",vol.57,No. 4,Autumn 1981,p. 605.

[8] Vance C., Hard Choices:Critical Years in America's Foreign Policy, N.Y.,1983,p.388.

[9] Salinger P., America Held Hostage:The Secret Negotiations, Garden City, N.Y., 1981,p.105.

[10] Հովհաննիսյան Ն., Իրան.Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը,Ե.,2004,էջ 20:

[11] Rubinstein A., նշվ. աշխ.,էջ 610:

[12] Տես Ramazani R., Revolutionary Iran:Challenge and Response in the Middle East,Baltimore,1986,p.83.

[13] Central Intelligence Agency, National Foreign Assesment Center, Iran-Iraq War: Status,Impact and Prospects, November 20,1981,p. 4, ինտերնետային կայքի հասցեն՝ www.foia.cia.gov

[14] "Newsweek", 22-02-1982,p.15.

[15] Director of Central Intelligence, SNIE 34/36.2-82, Implications of Iran's Victory Over Iraq, June 8,1982, Secret,p.13,Doc.3,-in: National Security Archive...Electronic Briefing Book No.167.

[16] Նույն տեղում,էջ 14:

[17] Atkin M.,The Islamic Republic and the Soviet Union,in: The Iranian Revolution and the Islamic Republic, Syracuse,1986, p. 202.

[18] Halliday F.,Iranian Foreign Policy since 1979:Internationalism and Nationalism in the Islamic Revolution,- in: Shi'ism and Social Protest,New Haven,1986,p.98.

[19] Hunter Sh.,նշվ. աշխ.,էջ 91:

[20] Агаев С.,Иран между прошлым и будущим. События, люди,идеи, М.,1987,стр.277.

[21] Varasteh M.,նշվ.աշխ.,էջ 58:

[22] Freedman R., Gorbachev,Iran,and the Iran-Iraq War,-in: Neither East, Nor West:Iran, the Soviet Union and the United States, New Haven,1990,pp.121-122.

[23] Ալիխանի Ա.,Մավազե վա ամալբյարդ-ե նեզամ-ե բեյն ալ-մելալի դար դաբալ-ե ջանգ-ե Արաղ ալայե-ե Իրան,- Էնդելաբ-ե եսլամի, ջանգ-ե թահմիլի վա նեզամ-ե բեյն ալ-մելալի,Թեհրան 1997,էջ 175, /պարսկ./:

[24] Hunter Sh.,նշվ. աշխ., էջ 97:

[25] Varasteh M.,նշվ.աշխ.,էջ 57:

[26] Freedman R., նշվ.աշխ.,էջ 133:

[27] "Newsweek",03-07-1989,p.30.